

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 Ֆր.

Վեցամսեայ ... 6 «

ԱՐՏԱՍՍԱՆՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան ... 14 Ֆր.

Վեցամսեայ ... 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50\$orwar a

ԿԱՆԽԻԿ

Ծանոցման սողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

, Iravounk"

VARNA (Bulgare)

Редакция

НАВѢСТНИКЪ

Иравунк"

ВАРНА

Գրութեանը ետ չեմ
տրուիր

ՏԻՈՒՐ ԵՐԵՒՈՅԹ ՍԸ

Անցեալ օր երկու բարեկամի հետ թէյարան մը նստած ատեննիս, ընկերներու ծանօթ՝ բայց ինձ անծանօթ երիտասարդ մը գալով, խօսակցութեան բռնուեցաւ մեր հետ, և խօսքի կարգով յարեց թէ «մարդ իրաւունք չը կարդայ»։ Ընկերներէս մին այս խօսքին բացատրութիւնը ուղեցնոյն երիտասարդը ամենայն բարեմտութեամբ սա պատասխանը տուաւ։— Եղբայր, ամէն մարդ կ'ըսէ թէ իրաւունքը անկեղծ թերթ մըն է։ Ես ալ կը հաւատամ թէ այդպէս եղած ըլլայ։ Բայց կը ցաւիմ սր այդ թերթի մէջ միւլթարական և ուրախաւիթ շատ քիչ բան կրնամ գտնել։ Հոն աւելի կը տեսնուին ցաւալի և տխրեցուցիչ լուրեր մեր ազգային գործերու մասին, յեղափոխականներու գործունէութիւնները չը հաւնիր և հայրենիքէն տխուր լուրեր կը հաղորդէ միշտ։

Միամիտ չնշտով մը արտասանուած այս խօսքերը ես արգահատանօք մտիկ կ'ընէի։ Երբ խօսակցներէ մին փութաց սա պատասխանը տալ։— Բարեկամ ի՞նչ կուզէիր որ գրէր, կուղեսոր ազգին վիշտերը ծածկէ՝ ինչպէս որ կընեն երբեմն թերթեր։ Կուզես որ սխալ եւ յիմար գործունէութեամբ հայ ժողովուրդին գլուխը բերուած կոտորածները ու աւերները չը յիշէ, կուզես որ այդ սխալները շարունակուին։ Սխալ մը սրբագրել տալու համար նախ զայն ճանցնել պէտք է։ անկեղծ ազգասիրութիւնը այս կը պահանջէ։ Գիտալիս որ դարմանեալ համար մարմինին փրկած մօտը ճանցնել և կտրել կը պարտաւորի բժիշկը։ մեր ազգային կեանքի բժիշկներն ալ արտասահմանի ազատ թերթերը պէտք է ըլլան։ այն թերթը՝ որ ազգին ցաւը և թունաւորիչ վէրքը ցոյց չը տար, կը նմանի այն հաճոյակատար բժիշկին ո՞ր իրեն ներկայացող վէրքին միայն ար-

տաքին բերանը գոցելու կ'աշխատի, մէջի ապականութիւնները առանց մաքրելու։ Այսպէս վարուող բժիշկներ հիւանդին մահը անխուսաքելի կընեն, թողած ըլլալով որ անոր ամբողջ մարմինը թունաւորուի։ Ծիշդ այդ տխուր դերը կը կատարեն այն խմբագիրները որոնք իրենց ընթերցողներուն միայն հաճոյք պատճառելու համար ուռուցիկ և ոսկեզօծ խօսքերով ժողովուրդի հաճոյասիրութիւնը շահագործել կը միտին։ Ի՞նչ, և կ'սպասէիք որ իրաւունքն ալ «պարսկական սահմանադրութիւնը վրայ հայկական փոքրիկ թագաւորութիւններ, Սասնոյ լեռները ամազուններու բանակներ եւ հարկւաւոր զինարաններ ու գործարաններ ունին»։ Ըսէր, երբ քիչ յետոյ պիտի տեսնուէր թէ այդ բոլոր խօսուած ու գրուածները իրականութիւնէ հեռի ստուերներն էին, որոնք աւելի թուրքը ըզգուշաւորութեան կը հրաւիրէին և անկը վտանգը կը փութացնեն անպատրաստ ու անզէն հայ ժողովուրդի գլխուն։

Առաւել քան հետաքրքրական այս խօսակցութիւնը իմ երեւակայութեան առջեւ կը պատկերացնէր ամբողջ հայ ժողովուրդին մտային այն քառասուն վիճակը, որ կը տիրէ այսօր ուրիշ ճողպարութեւն կարելիութիւնը միայն մեզ կրնայ դրական հողի մը վրայ գնել և յոյս ներշնչել ազգային բարօրութեան մը հանգրուանը հասնելու համար։ հաւանակ պարագային, ոսկեզօծ դեղահատներէ չլանալու մեր սա շրջանը եթէ երկար տեւէ, մենք դրական ժողովուրդ մը ըլլալէ հեռու, խեղճութեան դատապարտուած պիտի մնանք ընդ երկար։

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ռ. Բ. Ի. Ի. Ն.

Տէ՛ր Խմբագիր

Պաշտօնէջի հին և նոր գաղթականութիւնը զբաղեցնող խնդիրներէն գլխաւորը եղած է քաղա-

քիս Ազգ. վարժարանի փակումը։ Գաղթական 20 ի չափ տղաք եւ այլ ըրօման և օտար դպրոցներ տեղաւորուած են, շատերը վճարումով, շատերը՝ ձրի, եթէ այս փակումը քանի մը տարիներու համար ըլլայ ցաւալի է հետեւանքը, իսկ եթէ միայն մէկ տարւան համար փակուած է վարժարանը (ինչպէս կիմանամ հաւաստի աղբւրներէ, այս տարուայ մէջ հոգաւորութիւնը վարժարանի և եկեղեցւոյ պաշտօնէից ամենուն պարտքերը վճարելէ յետոյ) պիտի վերաբացուի դպրոցը՝ յառաջիկայ 1905 սեպտեմբերին, ըստ կանոնադրութեան կրթական նախարարին)։ սակայն թող ներսի մեզ ի նկատի առնուլ խնդիր մը որ իր ամեն կերպով ներկայացած դիւրին միջոցներով ի մասնաւորի գաղթական ծնողաց ուշադրութեան պէտք էր յանձնուէր, և կամ անոնց ուշը դրուէր։

Ծնողք բնական է սուրբ պարտականութիւն մ'ունին։ իրենց զաւակունքը առանց դպրոցի՝ չը թողլոյ համար և վերջապէս առ ի չգոյէ հայ դպրոցի օտար դպրոցներու կը յանձնեն իրենց ապագան կաղնող որդիները, չէ՛ր կարելի արդեօք խորհրդակցելով փոխանակ օտարներու վճարելու նոյն թոշակը վճարելին հայ դպրոցի տնօրինութեան և գոյն ինչ զոհողութեամբ մ'եւս հոգաբարձութեան կողմանէ, բաց պահուէր դպրոցը։ դիւրին, շատ դիւրին էր այս, բայց մեր ծնողք այդ բանը մտածելու միջոցը ունեցած չեն դժբաղդարար վաւրն զի ցաւալի է ըսել որ Պաշտօնէջի հայ դպրոցը ընդհանրականացէս, անհատականացէս պառակտեալ է, անոնց մէջ այնպիսի որոմ մը ցանուած է որ զանոնք ի մի ձուլել, ի մի խորհրդակցել իրենց նոյն իսկ մանկուայն դաստիարակութեան վերայ և ըստ այնմ տնօրինել պարտ ու պատշաճը՝ այս անկարելի դարձած է։ հետեւաբար ամեն հայր միայնակ իր կարողութեան ներած սահմանին մէջ անոք, ան-

օգնական մտածած ու գործած է իր զաւակին համար։

Ազգ. իշխանութեան և հայ ժողովրդեան միջեւ միջնորդի հոգեւոր պարտականութիւն ունեցող քահանայք իրերաց դէմ դիւռած են և ժողովրդեան ամեն խաւերու ատելութեան արժանացած են։ Քահանայն հոգ չը տանիր եկեղեցւոյ բնական գալթակցեալ մտքերը վերաշինելու, միայն և միայն շահու վրայ չափուած են անոր երբեմնակի բեմասացութիւնները, փոխանակ սրտերը ազգ. դաստիարակութեան կրակով հրահարելու, հայ դպրոցի գոյութիւնը անհրաժեշտ ու քաղցր կացուցանելու և ատոր աշխատիլը հայ ժողովրդեան ամենէն նուիրական պարտականութիւնը ցոյց տալու, տէր հօր բեմասացութիւնները աւուր պատշաճի տօներու և մեռելոցներու բացատրութիւններ են։ Երանի թէ այդ քարոզ կոչուած բացատրութիւններն ըստ օրինի եւ չափաւոր ըլլային։ Մեր ամենուս քրիստոնէական պարտականութիւնները հայկական պարտականութեանց հետ ձուլուած ըլլալը մեզ բացատրող չունինք, խեցրեկ և փծուն խօսքերով ժողովուրդը կը հրաւիրեն որ մեռելոցին դերեզման երթան իրենց ննջեցեալները օրհնել ասն, անոնց հագիններուն համար յատուկ պատարագ ընել տան, ահա մեր ամենէն շատ լսած քարոզը, ժողովրդեան մէջ տիրած երկպառակութեան աղբւրը ցամքեցնելու, յաւետ ջնջելու նկրտող սրտաշարժ քարոզներ չունինք, մեր քահանաները ուրիշ հոգերով զբաղեալ են։

Եկեղեցին յաճախող շատ քիչեր կան, և եթէ նշանաւոր տօնի օր մը հաւատացելոց բազմութիւն գայ խռնի, դանձանակի շրջագայութեամբ միայն մը զբաղեցնեն զանոնք։ Աղթատեղին գալու համար աղքատին գրպանը պէտք է առնուազն 50-60 սանթիմ ըլլայ, որպէս զի եկեղեցւոյ մէջ չ'ամենայ, հոգ չէ թէ այդ օրուան պարէնը ըլլայ

աղքատին այդ գումարը պէտք է եւ պարտաւոր է որ տէր պապայի գանձանակը ձգէ այն ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ եւ բանիւն Աստուծոյ...

Զեմ ուղեր աւելի ծանրանալ այս տղեկ ու անտեղի սովորութեան վերայ թերեւս կը զդացուին մեր քահանաներն ու կը ջնջեն զայն քանի որ ուշացած իսկ են:

Խաչատուր քհնյ. Մօսկովեան առժամանակեայ պաշտօնադուրկ եղած է, ինչպէս գիտէք ցարդնոյն վիճակի մէջ է. անձամբ հանրագրութիւն մը ստորագրել տալով, ինչպէս տեղեկացայ, պատրիարքարան խրկեր է իրեն հակառակ եղող կուսակցականներ վստահ կըսեն, թէ Ս. պատրիարքը չպիտի կանչէ զինքը ի պաշտօն մինչեւ որ ընդդիմադիր կուսակցութեան գոհացում չի տրուի:

Հոգաբարձութեան ընտրութիւնը երրորդ անգամն է որ պիտի կատարուի այս օրեր իցի՛ւ թէ, այս վերջինը ըլլաւ. գործ մը որ եթէ երկու կուսակցութեանէ համակրեալ ընտրելի մը գայ՝ կը յուսացուի վերջնալը Պուրէշի տեղացի հայութեան պառակտումին:

չարունակելի

1904 հոկտ. 8
Պուրէշ

ԱՐՁԱԳԱՆԴ ՀԱՊԵՇԻՍԾԱՆԷՆ

Առիս-Ապապայէն (Հապէշիստանի մայրաքաղաք) Գահիրէի «Արշալոյս» լրագրոյ ուղղում

Թղթակցութեան մը հետեւեալ մասերը կ'արտայայենք:

Հապէշիստանի մէջ հաստատուող բոլոր օտարականներու պաշտպանութիւնն ստանձնած են եւրոպական գեապանատունք: Այս մասին մինչեւ ցայս վայր բացատրութիւն մը կը կազմէին հայ գաղթականները՝ որոնց պաշտպանութիւնն եւ ոչ մէկ կառավարութիւնն ստանձնած էր: Վերջերս Ֆրանսական գեապանատունը, անշուշտ իր կառավարութիւնէն ստացած նորադրոյն հրահանգին համաձայն, փափաքեցաւ իր պաշտպանութեան ներքեւ տնտեսական թրքականութեան սոյն Ֆրանսական կառավարութեան սոյն գնահատելի եւ համակրելի որակազրուելուն հանդէպ հայոց՝ օեղի տըւտե կարգ մը երթագրութեանց հայ

գաղթականներու մէջ, Հայ գաղութի լուրջ մասը երախտագրութեամբ զընահատեց Ֆրանսական կառավարութեան սոյն փափաքը՝ հայտնէր տրամագրութիւնը առանց որոնելու յայդմ քաղաքական թաղուն ձգտումներ ի նպատակ ֆրանսական կառավարութեան ապագայ շահուց եւ ազդեցութեան զարգացման: Իսկ կարգ մը ողորմելիներ, բարեբաղդաբար չափ սակաւաթիւ, յետ խրաչեցան, տեսակ մը տարակոյններով եւ տատանումներով վերաբերուելով ֆրանսական կառավարութեան սոյն առ Հայս ցոյց տըւտե համակրութեան նորադրոյն արտայայտութեան: Այս իրենց ստուերներէն անարեկող եւ ստուերութեամբ տողորմած սակաւաթիւ ողորմելիները կը կարծեն թէ՝ ֆրանսական պաշտպանութեան ներքեւ մենկով ի դուր վերաւորած կ'ըլլան Հապէշ կառավարութիւնը, ու այդ վերաւորանքէն կարող է ծագիլ ապագայ վնասներ իրենց շահուց: Այս գաղափարը տրամաբանապէս ալ, արմատապէս ալ սըխալ է: Նախ որ ֆրանսական պաշտպանութեան ներքեւ մտնել չ'ենթադրեր երբեք ըմբոստանալ երկրին օրինաց ու սովորութեանց դէմ, այդ տեսակ պարագայի մէջ Հապէշ կառավարութիւնն ինքնին բաւական զօրա-

ւոր է օտար միջամտութիւնն խորտակելով պատեկ անսաստողները: Երկրորդ, Հապէշ կառավարութիւնն երբեք հակառակ չէ հայերուն եւրոպական թեւարկութեան մը ներքեւ մանկուղի տարի առեւ տրական եւ ոստիկանական նախարարն կէս պաշտօնապէս կը հարցնէր հայերուն թէ ո՞վ է իրենց պաշտպանութիւնն ստանձնող պետութիւնը եւ կը փափաքէր որ հայերը այդ ուղղութեամբ ճշդէին կանոնաւորելին պաշտօնապէս իրենց զրուցիւնն հանդէպ Հապէշ կառավարութեան:

Մինչեւ ցարդ Հապէշիստան ուղղակի հեռագրական հաղորդակցութիւն չունէր եւրոպայի եւ հեռեւապէս բոլոր աշխարհի հետ, այդ զգալի պակասը կամ պէտք լրացուց խաւական կառավարութիւնը Ասիա-Ապագայ ուղղակի կապելով հեռագրական գծով մը իր կարմիր ծովու գաղթականին՝ Մասուսի հետ, որ արդէն կապուած էր Խոտլիոյ, հեռեւապէս բովանդակ եւրոպայի եւ Հնդկաստանի ու ծայրագոյն արեւելքի հետ: Սոյն հեռագրական կապերուց զիծը չի հաստատուած, ամենամեծ դժուարութիւններ բացառիկ ծախսեր եւ մեծ ժամանակի կորուստներ կը կրէին տեղւոյս վաճառականները՝ զեպանատունները հաղորդակցելու համար արագօրէն արտասահմանի հետ: Հեռագրերը Հարար կը փոխադրուէին, Հարարէն ձիպուէին եւ ձիպուէին Ֆրանսա եւ ուրիշ երկրներ: Բացի մեծամեծ ծախսերէ, անազն ժամանակի կորուստ առ նուազն ճիշտ չափով պէտք էր հեռագրի մը պատասխանը ֆրանսական համար: Այժմ այդ երկու շարքեր իջած է առ առաւելն 3 օր: Սոյն հեռագրական նորահաստատ գծի վարչութիւնն մեծապէս զեղջած է սակագինն, առաջ մէկ բառի համար (Եւրոպա ուղղելի) կը վճարէինք 4 ֆրանկ այժմ երկուք ու կէս ֆրանկ: Իտալական կառավարութեան սոյն նախաձեռնութիւնն որ կարեւոր դարկ մը կուտայ Հապէշիստանի քաղաքակը-

թութեան՝ մեծապէս պիտի նպաստէ տեղւոյս վաճառականութեան զարգացման եւ ոգեւորման:

Մի քանի օր առաջ մեծ շքով կատարուեցաւ արքունեաց ոսկերչապետ Տիար Յալօր Պաղտասարեանի նստածին երեխային մկրտութեան հանդէսն կայսերական պալատան զօրաստանին հոյակապ Մայր եկեղեցւոյն մէջ՝ կ'ընդարձակուէր իսթաի երկրին կառավարչապետ Մինեւլիք կայսեր հօրեղբորդի եւ կայսրուհւոյն քոնայր բարձրապատիւ Ռաս Վօլտի Կորկիսի, Եկեղեցիին տաճարը խուռն եւ ընտրելազոյն բազմութիւն մը գրաւած էր: Ներկայից մէջ կը նշմարուէին կայսեր առաջին սենեկապետ Աթօ Վօլտի Կապրէլ, կայսրուհւոյն երկու բարձրաստիճան թիկնապահ երը, մայրաքաղաքի Ընդհ. կառավարիչ Էզաճ Կաւա, կայսեր աւագ թիկնապահ Կրնեպուճ Իփսաի, Կրնեպուճ ու կայսերական անձնական զանձոն նախարար Պերթրոնտ Մլու Կեթաի, Առեւտրական նախարար Հակատրաս Հայի Կորդիսի, կայսր. պալատան հեռագրական վերատեսուչ Աթօ Պէյանէի ներկայացուցիչները եւ բազմաթիւ պալատական պաշտօնեաներ: Հայ գաղութի առեւտրական դասէն՝ Տիարք Տիգրան Էպէան, Սարգիս Թէրզեան, Բ. Պողոսեան, Գէորգ Գօֆ տան ներկայացուցիչ Մարգար Միրզա, Սիմօն Սէմէրճեան, Ազնաւորեան եղբարք: Օնրիկ Փափազան, իրաւաբան տան ներկայացուցիչ՝ Սուրէն Չարբեան, Վահան Փողարեան եւ կայսր. պալատան հայ ազգի պաշտօնեաներէն եւ արհեստագործներէն Տիարք Միք. Թօփճեան, Տիգրան Հաղարեան, Փանոս Վարդանեանց եւայլն:

Կայսրը եւ կայսրուհին իրենց եղած մասնաւոր հրաւիրանաց շնորհալի փափկանկատութեամբ մը պատասխանած էին իրենց ներկայացու-

ՆԵՐՍԵՍ ՍՇՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱՉՄԱՎԷՊ հանդէսէ)

Խօլերայի երկրից վիճակաւոր առաջնորդ Կարեպետ արքեպիսկոպոս փախել էր Թիֆլիսից փախել էին նոյնպէս եւ նորան չըջապատող հոգեւորականներն, իսկ Ներսէսը տեղից չլարժուեց, Դժնդակ հիւանդութեան երկիւղը սարսափեցրել էր քաղաքի բնակիչներին, որոնք եւ քաղաքի պատուաւոր անձինք խուռն բաղմունքով զիմելով կաթողիկոսին՝ խնդրեցին ս. Գեղարդը բերել տալ Էջմիածնից: Նորանց աղաւանջը յարգուեց. իսկոյն սուրհանդակ ուղարկուեց Մայր Աթոռն եւ ս. Գեղարդը բերին: Բերողներն էին Պողոս եպիսկոպոսն եւ Ստեփաննոս վարդապետ Համազասպեանը: Կաթողիկոսը գնաց ընդառաջ քաղաքից դուրս եւ ընդունեց ս. Գեղարդը չուրջաստղեւտ եկեղեցական դասի հետ միասին հոգեւոր երգով, քանի տեղ թափօր (անդաստան) անելով՝ բերին վանքի աւագ եկեղեցին եւ բազմեցրին: Հանդիպած տեղից մինչեւ եկեղեցին հասնելը 4 ժամ տեւեց եւ բոլոր ժամանակը կաթողիկոսը ս. Գեղարդը ձեռնն բռնած ունէր: Ամբողջ քա-

ղաքի բնակիչներն՝ Հայ, Վրացի եւ Մահմետական խուռն բաղմունքով լալով գոռում գոչումով զիմաւորել եւ ուղեկցում էին թափօրին: Երբ ս. Գեղարդը բաղմունքին վանքի աւագ եկեղեցում կաթողիկոսը հրամայեց Գեղարդը բերող Պողոս եպիսկոպոսին եւ Ստեփան վարդապետին հանդուստնալ, իսկ Գեղարդի մօտ կանգնելու համար նշանակեցին տեղացի հոգեւորականներ: Համբուրդներ լսողութիւնն անթիւ էր, ոստիկանութիւնն, որ կանգնած էր կարգապահութեան համար, չէր կարող ժողովուրդի հասնելին դէմ դնել: Թէպէտ եւ կաթողիկոսը Գեղարդը բերողներին պատուիրեց որ հանդուստնան. բայց Ստեփաննոս վարդապետը զիմեց ինձ ասելով, «Ստեփաննոս, որդի, մենք ներգրծութիւն ենք կրել Էջմիածնից մինչեւ այստեղ ս. Գեղարդը ենք բերել. այժմ Ներկայապահ եպիսկոպոսը կաթողիկոսի հրամանով ուրիշ հոգեւորականներ է նշանակել կանգնելու ս. Գեղարդի մօտ. այդ մեծ անպատուութիւն է. խնդրեմ խոնարհաբար յայտնել Վահագնին, որ բարեհաճի մեզ իրաւունք տալ մնալու ս. Գեղարդի մօտ: Ես գնացի յայտնելի կաթողիկոսին վարդապետի խնդրը. եւ նա պատասխանեց. «Ես նորանց հանգստութեան համար էի այդ կարգադրութիւնն արել, իսկ հորանք երկու զրօն համար կամենում են անձնազոհ լինել. զլուրենքը քարը. թող դնան»: Գնացին եպիսկո-

պոսն ու վարդապետն եկեղեցի. լիքը բազմութիւն է. այնպէս որ եթէ առեղ զգէիր, գետին չէր ընկնի, կէս ժամ չանցած եպիսկոպոսն էլ վարդապետին էլ կրտսերական դուրս բերեցին եկեղեցուց: Զի՞ ժամ չանցած վարդապետը մեռաւ իսկ եպիսկոպոսն երկու օրից յետոյ: Զարմանալին այն է որ Թիֆլիսից առաջնորդարանից բոլոր փախել եւ հեռացել էին փախել էր եւ Սարգիս վարդապետ Զալալեանցն (յետոյ եպիսկոպոս), ու աճապարանքով փախչելով՝ ճանապարհին իր մուշտակը կորցրել էր, իսկ կաթողիկոսը անվերջ նստած էր: Բժիշկներն արգելած էին մրգեղէն՝ ծիրան, սալոր, կիտա եւ այլն ուտել, բայց նա անխափ ուտում էր: Երբ նորան ասում էին թէ վնասակար է այս միջոցին մրգեղէն գործածել, նա պատասխանում էր. «Է՛հ, Աստուած իւր պէտքական ծառային կը պահէ»: Կաթողիկոսը Պետերբուրգում եղած միջոցին Լազարեաններն առանց նախապէս նորա հաւանութիւնը առնելու, պատրաստել էին մի առաջարկութիւն, որով կաթողիկոսը երկու հազար ռուբլի պիտի կայսերական գանձարանից ուղէր փոխարինարար առանց առկուսի որոշ տարիներու համար, որպէսզի զանազան տեղերում ուսումնաւորաններ հիմնէր: Խաչատուր աղան յանձնեց այդ առաջարկութեան թարգմանութիւնը, կաթողիկոսը զարմացած ասաց. «Խաչատուր աղա՛, դուք ուղում էք ինձ ձեզ նմանեցնել. ես զարմանում

մեծապէս պիտի նպաստէ տեղւոյս վաճառականութեան զարգացման եւ ոգեւորման:

ցիւնները ուղարկելով սոյն մեծաշուք հանդէսին : Եկեղեցական արարողութեանց աւարտումէն վերջ , բաղմութիւնը դուրս ելաւ տաճարէն եւ յատուկ թափօր կազմելով՝ առաջնորդութեամբ հետեւեալագորաց գումարտակի մը գնաց Տիար Պաղտասարեանի բնակարանն , ուր փառաւոր կոչուեց մը տրուեցաւ նախագահութեամբ Բաբէր . Ռամ Վօլտի կորգիսի , բոլոր հրաւիրելոց : Կենացնէր առաջարկուեցան . առաջին բաժակը պարտուեցաւ Վեհ . Մենելիք Կայսեր եւ կայսրուհւոյն կենացը . Բ . Ը պարպուեցաւ բարձրագատիւ նախագահին եւ Գ . Ը կոչնատէրին կենացը (*) :

Հացկերոյթի սմբողջ տեւողութեան միջոցին Ռասը բոլոր հրաւիրելոց հետ կը խօսակցէր զըւարթ կատարաւարութիւններով : Գիտակցօրէն թէ՛ անգիտակցօրէն կ'ըզացնէր բոլոր ներկաներուն թէ պաշտօնի՝ առաջնորդ բարձրութիւնը երբէք հակառակ չէ մարդկային քրիստոնէական խոնարհութեան հետ : Հացկերոյթին վերջանալէն յետոյ , կէս ժամու չափ եւս մնալով , ոտք ելաւ Ռասը , բոլոր ներկաներէն հրաժեշտ առնելով եւ կրկնելով Տիար Պաղտասարեանի իր շնորհաւորութիւնները մեկնեցաւ իր հետեւորդներով եւ զինուորներով : Եւ հետզհետէ բոլոր հրաւիրեալները մեկնեցան , քաղցր յիշատակի մը տպաւորութեան ներքեւ կրկնակի յայտնելով իրենց խնդակցութիւնները յարգելի կոչնատելով : Յաջորդ առաւօտուն Հարարի նահանգին կառավարչպետ Բաբէր . Ռամ Մաքսէն եւս , անձամբ այցելեց Պ . Պաղտասարեանի եւ յայտնեց իր շնորհաւորութիւնները :

(*) Տրուած տեղեկութիւնները լիակատար ընելու համար , յարգելի յօդաւորները մոռցած է յիշատակել մըկրտեալին եւ մկրտիչ քահանային անունները :

Սասունի նորագոյն ջարդերու գումար , ինչպէս ամէն տեղ , նոյնպէս հոս ալ արձագանք գտաւ , եւ ամենախորին զայրոյթ ու սրտայուզութիւն յառաջ բերաւ տեղւոյս հայ գաղութին մէջ : Հայ վաճառականներէն մի քանին գովելի եւ օրինակելի նախաձեռնութեամբ իսկոյն հանդանակութեան ձեռնարկեցին , եւ մի քանի օրուան մէջ հանգանակեցին 3000 ֆր . ի չափ գումար մը : Ի նկատի առնելով հայ գաղութի նիւթական համեստ կարողութիւնը եւ իւր փոքրիկ թիւը , բաւական նշանակալից է այդ հանգանակութեան արդիւնքը : Անցեալ տարի յօդաւորով մը տեղւոյս հայ գաղութի քննադատելի կողմերը նշանակելով հանդերձ , գոհութեամբ ի վեր կը հանէին իր բարեգործական ձեռնարկութեանց նիւթապէս օժանդակելու գովելի ձգտումը եւ մրցակցութիւնն : Այս ներկայ հանգամանակութեան առթիւ վերստին արդեամբ հաստատեցին մեր գլխածը մէկըզմէկու հետ մրցելով աւելի տալու մէջ :

Հրապարակային գովեստի եւ գոհունակութեան արժանի է սոյն հանգանակութեան նախաձեռնութիւնն ստանձնող անձերու վարմէնքն . Տիարք Էպէեան եղբարք , Յակոբ Պաղտասարեան . Մարգար Միրզա եւ Գր . Պողոտեան , որոնք ոչ միայն գլուխ կեցան սոյն մարդասիրական գործին՝ այլ առատօրէն նպաստեցին կարեւոր գումարներ նուիրելով այդ գործին արդիւնաւորման , որուն մասնակցեցաւ նաեւ Տիար Սարգիս Թէրզեան կարեւոր նուիրատուութեամբ : Իսկ անգլիական դեսպան Գնդապետ Հարրիսըն՝ ոչ միայն ազնուաբար եւ անձնութեամբ ստանձնեց հանգանակելու գումարի առաջումը , այլ միթիւարական եւ յուսադրական խօսքեր ընելով հայ ազգի անվերջանալի զօրաղբիւթեանց առթիւ , իր կողմանէ ալ նուիրեց 10 անգլ . ոսկի : Ուրեմն այս

տողերը վերջապէս լեւաջ պարտ կը համարուի ի դիմաց տեղւոյս հայ գաղութին հրապարակաւ յայտնել խորին շնորհակալիքս անգլիական մեծ ազգին , սրտով եւ զգացումներով այս մեծ ներկայացուցչին :

ՆԱԽԱԿ ՏՕՊՐԻԶԷՆ

Ամսոյս 10 ին Սիւրիպղէէն ուղղուած նամակ մը հրատարակուած է «Շարժում»-ի մէջ :

Նամակագիր տիրացուն , որ երեւի «Թուրք» դաշնակցական մըն է , ինքզինքը գործի վրայ ցոյց տալու համար ելեր փորձ փորձեր է թէ տեղւոյս քահանան եւ թէ Յարութիւն Քօթչեանը մրտնետու , ըստ «սեւացիքեան» դրութեան :

Ի՞նչ քահանան , իրաւ , իբրեւ մարդ իր պակասութիւններն ունի , սակայն տնայր «Փալէ» ութիւնը չէինք գիտեր , եւ հիմա կրնանք . (չըլլայ թէ շտիւրացուն աչք ունի անոր պաշտօնին եւ կողմէ ու եւ կ'ըրպով մուր մը քսել տէր Պապային վրայ , յառաջիկային քահանայ ձեռնադրուելով-պապարար Սիւրիպղէէն-անոր տեղը բռնելու համար) :

Գալով Տիար Յարութիւն Քօթչեանի , մենք յիշեալ գիտենք պատուաւոր մարդ մը , որ իր արհեստովը կ'ապրի (առանց մէկուն կամ միւսին դըրամն ուտելու եւ առանց ձրիակերութեան) , իսկ ամէն պարագայի մէջ կ'աշխատի միշտ օգտակար ըլլալ ազգին :

Դիցուք թէ յիշեալները դաշնակցութեան կամ տեղւոյս անքնադատելի դատաւորին հասցէին ինչ ինչ դիտողութիւններ կամ քննադատութիւններ ըրած են , ինչպէս կը պնդէ , յօդուածագիրը պէտք էր յիշէր թէ ինչ ըսած են կամ գործած , որպէս զի հասարակութիւնը ըստ այնմ վճռէր եւ դատապարտէր զանոնք :

Իսկ պարզապէս ըսել թէ « հայոյնցին » այդ բանը մեղ յիշեցունել կուտայ թուրքին ինքնին սեփական խօսքը :

Գալով « գինեմոյ » բառին , ազնուութեան դէմ է . կարծենք , այդպիսի բառ մը հրապարակաւ գործածել , այն ալ ազգին քուէովը ընտրուած թաղական եւ հոգաբարձուի մը հասցէին , եւ ցաւ է մեզ այդ անաղին բառը լսել պատկանողի՞ մը կողմանէ անպիսի կազմակերպութեան մը որ ազնուութիւնը ուրիշներուն չը ծախար : Պարոններ , այդ ընթացքը ընթացք չէ . կամ անունիդ փոխեցէք կամ վարքերիդ . . .

Տօպրիչի

12 հոկտ. 1904

Տօպրիչ

Շ Ն Ո Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Քաղաքիս պատուաւոր վաճառականներէն մեծարոյ Տիար Բարսեղ Էսափաշեան՝ իւր որդւոյն հանդեպեալ Ազն . Տիար Արսէն Էսափաշեանի վերջին կամաց համաձայն , բարեհաճած է Ազգ . Վարժարանաց նուիրել 200 ֆր . ոսկեդրամ :

Հոգաբարձութիւնս ի դիմաց վարժարանաց բազմաթիւ որբ եւ աղքատիկ սւսանողաց , իւր սրտագին շնորհակալքն յայտնելով ազնիւ նուիրատուին , իր կրած անդարմանելի կորուստեան առթիւ ալ երկնային մխթարութիւն կը հայցէ թէ իրեն եւ թէ հանգուցեալ ընտանեաց :

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ . Վարժարանաց

Վ . Ատենադպրի Ատենապետ
Կ . Աճէմեան Փ . Հալաճեան

ԱԶԳԱՅԻՆ

Ի նպաստ Տարօնի զահրուս Այլեքսանդրիոյ մէջ բացուած հանգանակութեան գումարը 38101 զրդ . ու կէսի հասած է :

եւ ձեր անհեռատեսութեան վերայ : Գուք ցանկանում էք , որ ես ձեռքս մեկնեմ կտաւաւորութեան , երկու հարիւր հազար լուրջի մուրամ փոխառաքար , եւ եթէ նա մերժի ա՛ժօթ չէ՞ ինձ եւ անպատուութիւն չի՞ վերաբերի լուրը իմ ազգին . ես գործող լինեմ , իմ ազգը ինձանից չէ խնայի իւր նուէրը : Չորս միլիոն ժողովուրդ ունիմ , եթէ մի մի մանէթ ուզենամ՝ 4 միլիոն մանէթ կը ժողովեմ . քեզանից որ ուզենում , ինչպատու աղտ , դու կը խնայե՞ս ինձանից , երբ զիտենաս , որ ես ազգօգուտ գործի պիտի պէտքեմ : Կրկնում եմ , ես գործող լինիմ , իմ ազգը ինձանից չի խնայի իւր վերջին լուամն : Երբ ես Թիֆլիզում ուղղունարան սկսեցի հիմնել , ձեռքս պատարտի գումար չունէի , բայց եւ այնպէս Աստուծոյն ապաւինելով եւ հայոց ազգի առատաձեռն նուէրներին՝ սկսեցի շարունակել զպրօցի շինութիւնն . այնուհետեւ ոչ թէ միայն իր ժողովուրդն , այլ եւ վրացի իշխաններն էին նուէրներ տալիս . ինձ երբէք քան չէ պակասել . Թողէ՛ք , Թողէ՛ք , այդ ձեր անհեռատես մտածողութիւնն » : Եւ այսպէս բոլորովին մերժեց ու յանձն չառաւ կառավարութիւնից որ եւ իցէ գումար խնդրել : Լազարեանները կաթողիկոսական անուանական մեծադիր կնիք էին փորել տուել , վրան կաթողիկոսական թագ , գաւազան , եմփորտն եւ երկու աշտանակ , այն-

պիսիներն որով Ռուսաց եպիսկոպոսն պատարադիչ խաչակնքում է ժողովրդին : Երբ մատուցին կնիքը Ներսէսին եւ նա նկատեց աշտանակներն , առաց . « Մենք մեր սրբազան արարողութիւնները միջ-ցին սովորութիւն չունինք աշտանակով խաչակնքել ժողովրդին եւ եթէ մէկը հարցնի ինձ այդ աշտանակների նշանակութեան մասին ի՞նչ պատասխան տամ այ օրհնածներ , միշտ անխորհուրդ եւ անհեռատես գործերի էք ձեռք տալիս , ինչպէս որ եկեղեցում կարգադրել էք , որ պատարագին չերգեն « Ահիւ կացուք , երկիւղել կացուք » այլ ահիւ եղբուք , երկիւղել եղբուք . պատճառաբանելով թէ կացուք բառը գերմանացիներ լիզուով նշանակում է կատու » : Եւ չնդգունեց նորանց փորագրել տուած կնիքն , միեւնոյն ժամանակ հրամայեց եկեղեցում երգել այն ինչ որ նախնիքն երգել են եւ մեզ աւանդել . կաթողիկոսի հետ եկեղեցիների միութեան վերայ խօսող անձինք , երբ որ մի քանի անգամ լսեցին նորա պատասխանները Քաղկեդոնի ժողովի մասին — լեզբին : Խաչատուր աղան ինքը պատմեց կաթողիկոսին , թէ պալատական նախարար իշխան Վօլկոնսկին ասել է իրան . « Խրիստոսի Եակիմիչ , Հայ հոգեւորականութիւնն ունի ներսէո կաթողիկոսի նման արժանաւոր գլուխ . եթէ նա համաձայնէր ընդունելու Քաղկեդոնի ժողովն՝ առաջինը ես ստոր

պիտի անուանէի նախ նորան , յետոյ ձեզ Պարոն Լազարեան , տեսնում էք , թէ մենք , նախկին ունիատոր , իսկ ներկայումս լիտովի եպիսկոպոս Յովսէփին այժմ իւր անունով չենք կոչում , այլ անուանում ենք Որմաշկա , մինչդեռ ինչպէս գիտէք , մեզանում ազգանունով կոչում են միայն ամուսնաւոր հոգեւորականներն իսկ կուսակիցներին ընդունուած է իրանց պաշտօնի հետ միասին անունը տալ , օրինակ Անտօնի արքեպիսկոպոս Պետրոսեւրդի եւ Նովգօրօսի :

Նոյն օրերը վարչաւի փոխարքայ գնեւրալ Ֆելտմարշալ իշխան Պասկեւիչն եկել էլ Պետերբուրգ . եկաւ Ներսէսին տեսութեան . որովորական բարեւից եւ խօսակցութիւնից յետոյ Պասկեւիչը խօսքը փոխեց անցածի մասին եւ ասաց Ներսէսին , « Դուք ինձ չէիք ճանաչում . Ներսէսը պատասխանեց . ի՞նչպէս չէի ճանաչում , երբ մեր թշնամին էլ անգամ — Պարսից քանակի հրամանաւար Աբրահա Միրզան էլ գիտեր , դուք էք մեր բանակի գլխաւոր հրամանատարը » : « Այդ այդպէս է , ասաց Պասկեւիչը , բայց դուք ուրիշներին էիք յարգում թէ ինձ : » :

(Շարունակելի)

հանգանակութիւնը դեռ կը շարունակուի :

—Ապիսինիայի Հայերը խնդրագրով մը դիմած էին Կ. Պօլսի Ս. Պատրիարքին որ հոգեւոր հովիւ մը շնորհիւ իրենց : Ազգ. վարչութեան Խառն ժողովը նշանակած է որ Արթ. Կորապետ վարդապետ Մկրտիչեանը այդ պաշտօնով զբաղուի Ապիսինիա :

ԱՊՕՆԵԼԷՐԻՍԻԶԷ
ԻԽԹԱՐ

Կէչէն, պու վէ շաբաթ կիւնքի նուախէլէրիդին թիւրքէ գըս մը, էրմէնիճէ նէշը օլընմարնըն սէպէպի Միւսէլիֆիդին Եօլմըլըգոս պուլընմար տըր :

ԹԻԻՐՔԻԱ

Կ. Պօլսոյ մէջ հոկտ. 10 ին ստիկանութիւնը ձերբակալեց երկու նաւավարներ և ուրիշ անձ մը, որոնք ուժանակի 15 ռուբլեր կը փոխադրէին : Անոնք յայտնեցին թէ ռուսները ստացած էին յունական նաւի մը խոհարարէն, որպէսզի յանձնեն քարափին վրայ սպասող անձի մը : Բայց այս վերջինը չգտնուեցաւ : Քննութիւնը կը շարունակուի :

—Բարենորոգող չտէրութեանց զեսպանները պատասխանելով Դրան 5 հոկտեմբեր թուակի ծանուցագրին, յայտարարեցին թէ կը պնդեն սպաներու թիւը շատցնելու մասին իրենց պահանջուն լինելը : Բանի որ այդ մասին բացայայտ հրահանգներ ստացած են իրենց կառավարութիւններէն :

ՊԱՏԵՐԱԶՄ

—Ճիւղրալթարի անքլիկան եպ. Բոլիւս, ուրբաթ օր ազգ. պատրիարքարան երթալով, այցելեց Ս. Պատրիարքին եւ ապա Մայր եկեղեցի իջնեղով աչքէ անցուց Մայր-տաճարը ու յարակից մասերը : Մեկնելէ առաջ, ձեռքի նշանով մը օրհնեց ներկաները :

Շէրպուրկ. (Ֆրանսա) 10 հոկտ. Ռուսական «Քօրէա» փոխադրաւորը և պալթիկեան նաւատորմիդին պատկանող 4 թորբիլանաւեր հոս հանդիպեցան, որպէս զի ջուրու հանքածուխ առնեն եւ ճամբանին շարունակեն :

—Թօքիս. ն. թ. — Մարաշայիտ Օյաւայի զեկուցումին նայելով Շահէի կռիւն մէջ ճարտարները գերի առին են 500 ռուս, իսկ պատերազմադաշտին վրայ գտան 10550 ռուսական զիակ :

ներ : ճարտարները գրաւեցին նաեւ 45 հատի չափ թնդանթներ, 6920 ռուբլեր, 5574 հրացան և մեծ քանակութեամբ վառարան : Ռուսական կուրուստներու ընդհանուր թիւը կը հաշուի 60000 հոգի :

Սպաննուած ռուսները թաղուեցան զինուորական պատիւներով : Տուվր (Անգլիա) ն. թ. — Այսօր ժամը 1 ին կէս օրէն ետքը, պալթիկեան նաւատորմիդը ասկէ անցաւ :

—Հոմա. ն. թ. — Բեթերպուրկէն հեռագրի մը համեմատով, րաւորեալ սպաներու մէջ կը գտնուի նաեւ Նաբօլէօն Մուրատ իշխանը : Մուսուա հասնող վիրաւորներուն մէջ կը գտնուին կարգ մը վիրաւոր զինուորներ, որոնք կիսովին խենթեցած են, պատերազմավայրին վրայ իրենց կրած անհնարին տառապանքներուն պատճառաւ :

—Պերլին. ն. թ. — Մուքտէնէն «Լօքալ Անցայիէր» իլ իմացունեն թէ կռիւր դադրած է, որովհետեւ երկու թշնամի բանակներն ալ սատիկ յոգնած են : Մանչուրիայի մէջ սով կը տիրէ ցուրտը երթալով կը սաստկանայ :

—Թօքիս. ն. թ. — Զօրապետ Բուրբաթքիւնի ու Բուրբի բանակները դէմ դէմի կը կենան առանց յառաջխաղացումի : Ճարտարական գլխաւոր բանակատեղիէն կ'իմացունեն, թէ Ռուսերը մեծ զօրութիւններ համախմբեցին ճարտարական ալ թեւին դէմ : Ռուսական երկու ջոկատ զօրքեր շարժեցան դէպի Կանովան-չայ և 20000 հոգի դէպի Բաօլա-Լիանտ : Թշնամույն զօրքերը Սուֆոնթայի մօտ սկսան Շահէն ռմբակոծել և զրաւեցին 120 հրացան Շանսիւնկ-բաուի մօտ :

Շարունակեալ ընդհարումներէն կրնայ հասկնալ որ թըշնամական գործողութիւնները ի մօտոյ պիտի վերսկսին : Վերջին արիւնահեղ կռիւններու մէջ Ռուսերը կորսնցուցին 45000 սպաննուած ու վիրաւոր իսկ ճարտարները միայն 10000 սպաննուած :

—Խարպին. ն. թ. — (Ռուս. հեռագրական գործակալութիւն) 24 սեպտեմբերէն մինչեւ հիմա դէպի հիւսիս փոխադրուած են 26000 ի մօտ ռուս վիրաւորներ :

Լոնտոն հոկտ. 11 — Չինորս նաւերու խումբը Հըլ հասնելով պատմեց, թէ ուրբաթ գիշեր ռուսական Պալթիկեան նաւատորմը կրակ ըրաւ նաւախումբին վրայ : Նաւերէն երկուքն ընկղմեցան, երկու հոգի սպաննուած և շատեր ալ վիրաւորուած են : 50 ձկնորս նաւատերերու փառաբանները Հըլի մէջ արտաքին գործերու և ծովային նախա-

րարներուն բողոքեցին այսպար ձակաւ մասին : Նաւապետին ու փոխանորդին մարմինները որոնց գլուխները փրթած են, Հըլ տարուեցան : Չինորսներէն շատ մը վիրաւորեալներ կան :

Բեթերպուրկ. ն. թ. — Ռուսական հեռ. գործակալութեան մանաւոր թղթակիցը կը հեռագրէ երէկուան թուականաւ, թէ ըստ երեւոյթին ճարտարները Շահէէն կը քաշուին : Անոնք պարպեցին Շահէի կայարանը և խիստ տկար կերպով պատասխանեցին Ռուսական կրակին : Ռուսական բերդի թնդանթները գործ կը տեսնէին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Սօֆիայի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնեն շքեղ կերպով ընդունելու համար Սերպիոյ Բեդր թագաւորը, որ կուգայ այցելել թ. Բ. Ֆէրտինանտ իշխանին : Թագաւորը յառաջիկայ կիրակի կէս օրին Սօֆիա պիտի հասնի :

ՎՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնտոն. 11 հոկտ. — Լրագրաց ըսածին նայելով, «Վիէննա» շոգեաւը ընկղմեցաւ ախրջ նաւաղներով, ռուսական պատերազմանուերէն արձակուած ռուսներուն հետեւանքովը :

Չինորսները կը յայտարարեն թէ ռուսական նաւերը բաւական մօտիկ կ'անցնէին և կրնային ճանչնալ իրենց (ձկնորսներուն) ով ըլլալը : Մինչեւ հիմա հիւանդանոց փոխադրուած վիրաւորեալ նաւաղներուն թիւը 20 ի կը հասնի :

Ռուսական զեսպանատան քարտուղարը յայտարարեց, որ Ռուսերը, դեռ քանի շաբաթ առաջ, լուռ առած էին, թէ ճարտարներու կողմէ յարձակում մը պիտի գործուէր Հիւսիսային ծովին մէջ : Այս պատճառաւ, Ռուս նաւապանները հաւատացեր էին թէ ձկնորս նաւատորմը ծովի ականներ ունենէր հետը, ճարտարական ծառայութեան մէջ կը գտնուէր և թէ թշնամական նպատակներ ունէր :

—Լոնտոն. ն. թ. [Բեթէր] Ուրբաթ օրը Ռուսերը անցան Շախօ գետը եւ կը յառաջանան դէպի ճարտարական գիւղերը :

—Լոնտոն. ն. թ. — Արտաքին գործերու նախարարը լուր առած է թէ ռուսական նաւատորմը, ձկնորսանաւերուն վրայ կրակ ընելէն յետոյ, շարունակեց իր գնացքը, նաւ մը միայն ձգելով

որպէս զի ձկնորսանաւերուն ինչ ըլլալը լաւ մը հասկնայ : Նախարարութիւնը շուտափոյթ քննութիւն մը բացած է :

—Բեթերպուրկ. ն. թ. — Զօրապետ Սախարով կը հեռագրէ թէ 9 էն 10 ի գիշերը խաղաղ անցաւ : 10 ին թշնամին ռմբակոծեց Ռուսական բանակին կեդրոնը :

—Լոնտոն. ն. թ. — Ռուսական զեսպանը վերադարձաւ արձակուրդէն : Կայարանին մէջ շատ մը երիտասարդներ կ'սպասէին անոր նախատալից ցոյցեր ըրին : Անձ մը փորձեց զեսպանին կառքին ապակիները կտրել :

Է Օ Ռ Օ Ֆ Է Ն

Ֆրանսերէն միջազգային շաքարաքերը
Նշանաւոր գրագէտներու խումբի վարչութեամբ հրատարակուող այս շաբաթաթիւը կը պաշտպանէ բոլոր հարաւարտող ժողովուրդներու իրաւորքը լուրջ և քաղաքական շնորհիւ համար : Գինն տարեկան 15 և վեցամսայ 8 ֆր. : Խնդրոյն իբր նոյն օրինակ մը ձրի կը գրէ : Հասցէն
Վարչութիւն «Էնօթիէն»
24 Տօֆին փողոց
ԲԱՐԻՉ 6 րդ .

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, հոկտ. 13	ՀԱՆԻՐԷ
ՊՈՒՂՏԱՐ	
Վալոն 54-60 լիպ. 9.80 / 11.80	
Արապա 52-62 լիպ. 9 / 12.20	
ԱՐԲԱ,	
Վալոն 100 քիւ Բիւ 10. — / 10.10	
նոր 10. — / 10.10	
Արապա 42-45 լիպ. 5.40 / 6.	
ԵՌԻՒՍԱՐԱՐԱՎ 33/36 լիպ. 4. 20/4, 40	
Վալոն 100 քիւ 10.40 / 10.60	
ՅԱՍՈՒԼԵԱ 100 քիւ — 26. — 28	
Արապա 100 քիւ. 25 — 29	
ՏԱՐԸ արապա և օգ 9.90 / 11	
ՔՈՂՁ արապա 55-60 լիպ. 9.90 / 11	
ՄԻՍԻՐ 100 քիւ 7.90 — / 8.10	
ՉԱՎՏԱՐ արապա 7.60 / 8.	
« Վալոն 7.60 / 8.	
Կիւնտէ 40 — 50 Վալոն վէ 7-800	
արապա կէլէքտէ. Վալոն մուամէլէս	
նաբօլէօն 20 ֆր. արապա մուամէլէս	
նաբօլէօն 20. 20 :	

ՍՐԱՐԱՅԻՑԷ
Նարոլէոն 20, 20 ֆրանք
Օսմ. իւրաք 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱՐԱԼԻՑԷ	
Վարնա բիցարնտա պաղպաղեկ	
մալլէրին պու կիւնքի ֆիլպթը, ալթուն ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ 1,90 / 2	
Շէֆէր նէմցէ 70	
Շէֆէր (քէսմէ) սանտրգ 38.	
ԲԻՐԻՆՃ Ֆիլպթ չուվալը 47.	
» ճարտար » 38,	
» Ինկիլիզ » 28	
» Բիլոն » 50	
ԿԱՉ, սանտրգ 9. 50	
Չէթիւն և օգ քիւ 90. — 1	
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 50	

Одговорили А. Курбетиянъ
печатница «Взаимности» — Варна